Տպագրված է 3 օրինակից

Օրինակ ---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
01/12/2011թ թիվ 75-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

---------- Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

«30» դեկտեմբերի 2011 թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-034

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ՀԱՄԱԼԻՐ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ)

ԵՐԵՎԱՆ - 2011

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով սահմանվում է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության (այսուհետ՝ Բյուրո) կողմից Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների մոտ իրականացված համալիր ստուգման ժամանակ հայտնաբերված խախտումների համար կիրառման ենթակա պատասխանատվության միջոցների տեսակի և չափի որոշման մեթոդաբանությունը:

2. Սույն կանոններով չի կարգավորվում Բյուրոյի կողմից կարգապահական պատասխանատվության հետ կարգապահական պատասխանատվության ենթարկված անձին հանձնարարական (հանձնարարականներ) տալու, ինչպես նաև Բյուրոյի անդամությունից զրկում կարգապահական տույժի կիրառման մեթոդաբանությունը:

ԳԼՈՒԽ 2.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3. Համալիր ստուգման ժամանակ հայտնաբերված խախտումների համար պատասխանատվության միջոց կիրառելիս սույն կանոնների 2և 1-ով սահմանված աղյուսակով (այսուհետ՝ աղյուսակ) նախատեսված յուրաքանչյուր ուղղության համար սույն կանոններով սահմանված կարգով նշանակվում է մեկ պատասխանատվության միջոց՝ բացառությամբ սույն կանոնների 7-րդ կետով նախատեսված դեպքերի, այնուհետև բոլոր ուղղություններով նշանակված տուգանքները գումարվում են՝ կազմելով ընկերության նկատմամբ կիրառվող տուգանքի ընդհանուր չափը: Ընկերության նկատմամբ յուրաքանչյուր ուղղությամբ նշանակված տուգանքները և (կամ) նախազգուշացումները չեն միավորվում և կիրառվում են առանձին:

4. Ընկերության նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցի տեսակը որոշվում է աղյուսակով տվյալ ուղղության համար նշված համապատասխան կարգավորիչ գործակիցները բազմապատկելու միջոցով: Ընդ որում, կարգավորիչ գործակիցների արտադրյալը 0,5 կամ ավելի ցածր լինելու դեպքում տվյալ ուղղության գծով հայտնաբերված խախտումների համար ընկերության նկատմամբ նշանակվում է նախազգուշացում, իսկ ավելի բարձր լինելու դեպքում՝ տուգանք:

5. Սույն կանոնների 4-րդ կետով սահմանված կարգով տվյալ ուղղության գծով ընկերության նկատմամբ տուգանք նշանակվելու դեպքում այդ տուգանքի չափը որոշվում է համապատասխան կարգավորիչ գործակիցների արտադրյալը տուգանքի բազային չափով բազմապատկելու միջոցով: Այն դեպքերում, երբ Բյուրոյի խորհրդի (կարգապահական հանձնաժողովի) հիմնավորված կարծիքով տվյալ ուղղության գծով հայտնաբերված խախտումների (դրանց մի մասի) նկատմամբ ընկերության կողմից դրսևորվել է դիտավորություն, ինչպես նաև խախտմամբ այլ անձանց խոշոր վնասներ պատճառված լինելու կամ խախտման արդյունքում ընկերության՝ խոշոր չափերով անհիմն հարստանալու դեպքերում խախտում թույլ տված ընկերության նկատմամբ սույն կետի համաձայն կիրառման ենթակա տուգանքը կարող է համապատասխան չափով մեծացվել: Բոլոր դեպքերում, այն խախտումների համար կիրառվող տուգանքի չափը, որոնք

ուղղակիորեն կամ անուղղակիորեն Բյուրոյի համար առաջացրել են վնասներ, չի կարող պակաս լինել Բյուրոյին պատճառված վնասի չափից:

6. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների նկատմամբ նշանակվող տուգանքի բազային չափ է սահմանվում 50 000 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը:

7. Համալիր ստուգման արդյունքներով Բյուրոյի կողմից իրենց բնույթով և (կամ) ծանրության աստիճանով մյուս խախտումներից անհամեմատ տարբերվող խախտումներ հայտնաբերվելու դեպքում Բյուրոյի խորհուրդը (կարգապահական հանձնաժողովը) իրավասու է այդ խախտումներն առանձնացնել աղյուսակում նշված ուղղություններում ներառված խախտումների խմբից: Սույն կետի համաձայն առանձնացված խախտումների համար պատասխանատվության միջոց կիրառելիս Բյուրոյի խորհուրդը (կարգապահական հանձնաժողովը) առաջնորդվում է Բյուրոյի կանոնադրությամբ նախատեսված՝ պատժամիջոցների կիրառման ընդհանուր կարգով և կաշկանդված չէ սույն կանոններով սահմանված մեթոդաբանությամբ:

8. Սույն կանոնների համաձայն հաշվարկված՝ մեկ խախտման համար կիրառման ենթակա տուգանքի չափը Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի կողմից սահմանված տուգանքի առավելագույն չափը գերազանցելու դեպքում որպես պատասխանատվության միջոց նշանակվում է տուգանքի առավելագույն չափը:

Ապահովագրական ընկերությունների ստուգման արդյունքներով կիրառվող պատասխանատվության միջոցների չափերի որոշման մեթոդաբանության աղյուսակ

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՏԵՂ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ, ԵՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ				ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ																					Կարգավորիչ գործակիցների վերջնական արդյունքները
				1	2				3			4			5			6			7		
				Խախտման բնույթը	Խախտումների մասսայականությունը (ստուգման ընտրանքից)				Խախտումն ստուգման ընթացքում կամ պատասխանատվության միջոցի կիրառման պահին վերացված է, թե ոչ			Տվյալ ուղղության գծով հայտնաբերված խախտումների առնվազն մեկ երրորդի կրկնությունը (նախկինում խախտումը վերացնելու հանձնարարականի առկայությունը)			Ապահովագիրների, ապահովագրված անձանց և սուբժողների բողոքների քանակը (տվյալ ուղղության հետ կապված ամբողջ թվաքանակում)			Ստուգող խմբի գնահատականը (այդ թվում՝ ստուգման ընթացքում տվյալ ուղղության մասով Բյուրոյի հետ ընկերության համագործակցության մասով)			Հանգեցրել են արդյոք խախտումները անբարեխիղճ մրցակցության		
Ըստ Բյուրոյի RL-027 կանոնների		Ըստ պատժամիջոցների խմբավորման			≤ 3%	3%< ≤10%	10%< ≤20%	20% <	Վերացված է	Վերացված է մասնակի	Վերացված չէ	1-ին անգամ	2-րդ անգամ	3-րդ և ավելի անգամ	Չկան	≤ 3%	3% <	Լավ	Բավարար	Անբավարար	Չեն հանգեցրել	Հանգեցրել են	
1	Որպես Բյուրոյի անդամ ներկայացվող պահանջներ	1	Որպես Բյուրոյի անդամ ներկայացվող պահանջներ	1	Չի կիրառվում				0.3	0.7	1.3	Չի կիրառվում			Չի կիրառվում			Չի կիրառվում			Չի կիրառվում		
2	Գովազդ և տեղեկատվության հրապարակում	2	Գովազդ և տեղեկատվության հրապարակում	1	Չի կիրառվում				0.3	0.7	1.3	0.5	1.1	2.4	Չի կիրառվում			0.8	1.1	1.3	1.0	1.5	
3	ԱՊՊԱ պայմանագրերի կնքում	3	ԱՊՊԱ պայմանագրերի կնքման գործընթաց	1.5	0.8	1.1	1.7	2.5	0.5	1.0	2.0	0.8	1.7	3.6	1	2	4	0.8	1.2	1.6	1.0	1.8	
		4	ԱՊՊԱ պայմանագրերի դադարեցման գործընթաց	1.7	0.9	1.3	1.9	2.9	0.6	1.1	2.2	0.9	1.9	4.1	1	2	4	0.8	1.2	1.7	Չի կիրառվում		
4	Ապահովագրավճարների հաշվարկում	5	Ապահովագրավճարների հաշվարկում	2	1.0	1.5	2.3	3.4	0.7	1.3	2.6	1.0	2.2	4.8	1	2	4	0.8	1.3	1.8	1.0	2.0	
5	ԱՊՊԱ վկայագրերի պահպանում, հաշվառում և հսկողություն	6	ԱՊՊԱ պայմանագրերի և կտրոնների պահպանման, հաշվառման, հսկողության և գույքագրման գործընթաց	1.8	0.9	1.4	2.0	3.0	0.6	1.2	2.4	0.9	2.0	4.4	Չի կիրառվում			0.8	1.25	1.7	Չի կիրառվում		
6	ԱՊՊԱ կտրոնների պահպանում, հաշվառում և հսկողություն																						
7	Ապահովագրական ընկերությունում հաշվառման տվյալներով առկա ԱՊՊԱ կտրոնների մնացորդի քանակի գույքագրում																						
8	Ապահովագրական գործակալների մոտ առկա ԱՊՊԱ կտրոնների մնացորդի քանակի գույքագրում																						
9	Անդամավճարներ և Երաշխավորման ֆոնդ կատարվող վճարներ	7	Անդամավճարներ և Երաշխավորման ֆոնդ կատարվող վճարներ,	1	Չի կիրառվում				0.3	0.7	1.3	0.5	1.1	2.4	Չի կիրառվում			0.8	1.1	1.3	Չի կիրառվում		
10	1. Ապահովագրական պատահարների գրանցում 2. Ապահովագրական հատուցումների կարգավորում 3. Վնասների գնահատում և փորձաքննություն	8	Ապահովագրական պատահարների գրանցման, փորձաքննությունների իրականացման գործընթաց և ապահովագրական հատուցումների կարգավորում	2	1.0	1.5	2.3	3.4	0.7	1.3	2.6	1.0	2.2	4.8	1	2	4	0.8	1.3	1.8	1.0	2.0	
		9	Փորձաքննությունների արդյունքների և ապահովագրական հատուցման որոշումների ծանուցումների գործընթաց	1.8	0.9	1.4	2.0	3.0	Չի կիրառվում			0.9	2.0	4.4	1	2	4	0.8	1.3	1.7	Չի կիրառվում		
11	Բյուրոյի կողմից տրված հանձնարարականների, ինչպես նաև վերահսկողական ուղղիչ միջոցառումների ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարում	10	Բյուրոյի կողմից տրված հանձնարարականների, ինչպես նաև վերահսկողական ուղղիչ միջոցառումների ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարում	2	Չի կիրառվում				0.7	1.3	2.6	1.0	2.2	4.8	Չի կիրառվում			0.8	1.3	1.8	Չի կիրառվում		
12	Օրենքով և (կամ) Բյուրոյի կանոններով նախատեսված այլ պահանջների պահպանում	11	Օրենքով և (կամ) Բյուրոյի կանոններով նախատեսված այլ պահանջների պահպանում, այդ թվում՝	1	0.5	0.8	1.1	1.7	0.3	0.7	1.3	0.5	1.1	2.4	1	2	4	0.8	1.1	1.3	1.0	1.5	
		12	Ապահովագրական գործակալներին վճարվող ԱՊՊԱ միջնորդավճարների հաշվառման և վճարման գործընթաց	1.5	0.8	1.1	1.7	2.5	Չի կիրառվում			0.8	1.7	3.6	Չի կիրառվում			0.8	1.2	1.6	1.0	1.8	
		13	Ապահովագրական գործակալների հետ կնքվող գործակալական պայմանագրերի նվազագույն պահանջներ	1.1	0.6	0.8	1.2	1.9	0.4	0.7	1.5	0.6	1.2	2.7	Չի կիրառվում			0.8	1.1	1.4	Չի կիրառվում		